ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2026թ. թիվ 344-Ա

Ն.ՆԱԶԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ
ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 92-րդ հոդվածի 3-րդ մասի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման, փորձաշրջանի սահմանման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 37.1 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2025 թվականի մայիսի 19-ի թիվ 236-Ա, 2025 թվականի օգոստոսի 15-ի թիվ 466-Ա, 2025 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 801-Ա և 2026 թվականի մայիսի 14-ի թիվ 312-Ա որոշումները՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գարգառի Վ.Բալայանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Նարեկ Նազարյանի նկատմամբ սահմանված փորձաշրջանի ժամկետը երկարաձգել մինչև 2026 թվականի հունիսի 7-ը ներառյալ:

2. Փորձաշրջանի ղեկավար Անահիտ Կյուրեղյանին՝ փորձաշրջանի ավարտին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, գնահատել փորձաշրջանի ընթացքում տնօրենի կատարած աշխատանքները և մասնագիտական հանձնաժողովին ներկայացնել տնօրենի աշխատանքների գնահատման թերթիկը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

X

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ՂԱՐԻԲՅԱՆ

2026թ. մայիսի 20
ք.Վանաձոր